

Խնձորեկ և Տրմբալասկ տեղանունները

Հրաչ Մարտիրոսյան (Վանաձոր, Լեյդեն, Վիեննա)

(1) Վաստակաշատ լեզվաբան Ալ. Մարգարյանն իր «Ստուգաբանություններ» (ԵՊՀ հրատ., 2015) գրքում

- հանգամանորեն քննում է *Խնձորեկ* տեղանվան վկայությունները՝ *Խնձորեկ* (Աբրահամ Կրետացի), սեռ. *Խնձորեկոյ* (1654 թ. հիշատ.), *Խնձորէքս* (Տաթևի վանքի հարկատու ցուցակում՝ 1730), *Խնձորէքս* («Ընտիր պատմ. Դաւիթ Բէգին») և այլն.
- հիշատակում է բարբառային ձևերը՝ *Խոնձորէկոյ* (սեռական հոլով), *Խոնձորէկան* (բացառական հոլով), *Խոնձորէկում* (ներգոյական հոլով). բնակիչների անվանումը՝ *խոնձորէկցիք*:
- Ապա համոզիչ կերպով ցույց է տալիս, որ *Խնձորեկ* տեղանվան *-u-* տարրը բուն տեղանվանը չի պատկանում.

խնձորի ծառանուն + *-ակ* ածանց (նման կազմությամբ գյուղանուններ շատ կան՝ *Թեղեակ*, *Տանձեակ* և այլն). ապա հավելվել է *-u-* տարրը և դրավորվել (*Խնձորեկ-u > Խնձորեկ*):

(2) Միայն թե հեղինակը, ցավոք, բացահայտորեն չի պարզաբանում այս *-u-*ի բնույթը, թեև ակնհայտ է, որ գործ ունենք գրաբարյան հոգնակի հայցականի *-u* ցուցիչի հետ:

• Տեղանվան գրաբարյան *-u-*ով հոգնակի հայցականը (որ *ի* նախդիրով արտահայտել է ներգոյականի և ուղևորման [locative և allative/directive] իմաստներ) հետագայում հաճախ քարանում է ու դառնում արմատական:

- ▶ Օրինակ, ուղղական՝ *Մասիք*, բայց՝ *ի Մասի-u* ‘Մասիսում’ կամ ‘դեպի Մասիս’, իսկ արդի հայերենում՝ *Մասիս*, սեռական՝ *Մաս(ի)սի*: Հմմտ. *Կար-u* (*Կար-ու-ց բերդ*) ևն: Հասարակ բառերից՝ *բաղանիք* vs. *բաղնիս*, *հարսանիք* vs. *հարսնիս/խառ(u)նիս* ևն:

(3) *Խնձորեկ*-ի այս ստուգաբանությանը Մարգարյանն անդրադարձել է նաև ՊԲՀ 1991, 1, 134-138-ում, որտեղ նույնպես *-u-*ի հարցը թողնում է մութ: Սակայն նա քանիցս նշում է հայցականի *-u-*ն՝ այլ տեղանունների կապակցությամբ (տես 2015-ի գրքի էջ 179-182, 192-193):

(4) *Խնձորեակ*-ի ստուգաբանության սցենարը հրաշալիորեն հաստատվում է Սյունիքի մեկ այլ տեղանվան օգնությամբ:

- Ստեփանոս Օրբելյանը հիշատակում է *Տամալեկ-ք* գյուղանունը. հավանաբար *տամալի* ‘տանիք, երդիկ’ + *-ակ* ածանց:

- Գյուղը 9-10-րդ դդ. պատկանել է Տաթևի վանքին: Գյուղի բնակիչներն այդ ժամանակ երբեմն ապստամբել են վանականների անարդարությունների դեմ, բայց ամեն անգամ էլ ճնշվել են (ՀայՏեղԲառ 5, 2001, 23a):

- Ավերակները հիմա կոչվում են *Տրմբալիսիս* կամ *Տամբալակ* (Տաթևի վանքից հվ-արլ):

▶ Հին հոգնակի հայցականի քարացուկ՝ **Տամալեակ-ս > *Տրմալեկս > Տրմբալիսիս* (*կս > սկ* դրափոխություն)

(5) Երկու տեղանունների մեջ էլ՝ *կս > սկ* դրափոխություն, հմմտ. օրինակ *փուքս > Ագուլիս* ու Մեղրի *փօսկ* (տես ՀԱԲ 4, 529):

- Ռնգային միջնահավելվածի համար հմմտ. *սամետայ(ն)* ‘սամիի՝ լուծի զույգ փայտերի կապը՝ > Ղարաբաղ *սրմբետան* (Martirosyan 2013, 97):

(6) Մաշտոցի ծննդավայր գյուղը՝ *Հացեկաց*, ունի նույն կազմությունը.

▶ *հացի* ծառանուն + *-ակ* ածանց, այսինքն՝ հոգնակի ուղղական **Հացեակ-ք*, սեռական *Հացեկ-ա-ց*, այսինքն՝ հացյակ ծառերի՝ հացենիների գյուղ

Միայն թե այս դեպքում հայցականը (**Հացեակ-ս*) չի պահպանվել:¹

Հրաչ Մարտիրոսյան, 08.07.2016, Վիեննա
hrch.martirosyan@gmail.com

¹ *Խնձորեակ*, *Տամալեկք* և *Հացեկաց* տեղանունների ստուգաբանության և հարակից խնդիրների շուրջ ավելի մանրամասն տես Martirosyan 2010, էջ 599-600, 678-680, 762, 813-814: